

րեն կը վերադառնայ չեզոքութեան սահմաններն մէջ տեղութեան սահմանադրութեան վերաբերեալ անորոշութեան չափուց պաշտպանութեան համար պէտք եղած միջոցները ձեռք առնուելու Կառավարութիւնը կը յայտնէ թէ կայսրը մինչև ցարդ զինուորական արտաքին կարգի միջոցներ ձեռք առնուելու հարկ մը չտեսաւ :

Փարիզ 27 յունիս.
Պ. Կառավարութեան ընտրական շարժման տնօրէնութիւնն իւր վրայ առաւ և հանրապետական մեծամասնութեան վերընտրութիւնն ապահովելու կախարհ :

Պէրիք 27 յունիս.
Լորտ Ռուսէլ մեր քաղաքը կ'սպասուէր Պէրիք 27 յունիս.
Համապատասխան յոգնուէր կառելոյ, և յայտնապէս կը քաջալերէր Ռուս գործակատարները : Մեծ քանակութեամբ ուսանական բուսկը կը շրջապէրէր :

Ներկէջէն լուր կուտան թէ Ռուսաց ռազմականութիւնն աւերմունք գործեց քաղաքին մէջ :

Լոնտոն 29 յունիս.
Լորտերուն ժողովին մէջ Տէրպի կողմէն ըսաւ թէ Ռուսական բանակը զրկուած Անգլիացի զինուորական կցորդ (աւթալէ) Պ. Ռէյլիէ և թէ Սըր Բամպլէյ ծայրայեղութեան վրայ տեղեկագիր չիմուելու յառաջ հրահանգ չէ ստացած : Բայց թէ Պ. Ռէյլիէ և թէ Սըր Բամպլէյ ծայրայեղութիւն մը տեսած ժամանակներն անշուշտ կը գրէին մեզ, վասն զի զինուորական կցորդներուն պարտքն է ամեն կարևոր կողմերէն իրենց կառավարութեան հաղորդել :

Երեսփոխանաց ժողովին մէջ ալ Ռուսաց Կովկասի մէջ գործած անդիմադրելի թիւերն ըլլալով, Պ. Պուրը պատասխանեց թէ Միգիլիսի փաշան Կովկասի մէջ Ռուսաց գործած խփոթութիւններուն վրայ հեռագիր մը հաղորդեց կառավարութեան, բայց Անգլիայ այն կողմը զինուորական կցորդ չունենալով չէ կրցած անոր ճշդութիւնն ստուգել :

Լոնտոն 29 յունիս.

Օտմ. Բոնո.	8 5/8
Փոխ.	1863 9
"	1869 8 5/8
"	1871 34
"	1872 15 1/4
"	1873 8 5/8
"	Կղիպրոս 41 4/8
Անգլ. Բոնո.	94 7/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օտմ. Երեսփոխանական ժողովոյ առաջին շրջանն հինգշաբթի օրը գոյ-ւեցաւ : Վսեմ. Ահմէտ վէֆիդ փաշայի հետեւեալ տեսնախօսութեամբ :

«Մեր այս աւտոր նիստը՝ ներկայ շրջանին վերջին նիստն է : Քանի մը գործեր որոշելու համար անցեալ շաբթու կայսերական հրամանաւ աւելցած տառնօրեայ պայմանաժամն ալ այսօր կատարուի : Բայց ձեր երեսփոխանական պաշտօնը չվերջանար : Դուք դարձեալ ազգին երեսփոխանքն էք : մինչև որ Սահմանադրութեան համաձայն ասկէց երեք ու կէս ամիսն նոր ընտրութիւնը կատարուին : Հետեւեալ, եթէ պէտք ըլլայ, կրնանք մինչև այն ժամանակ արտաքին կարգի գումարուում ընել :

«Ներկայ շրջանին մէջ՝ պարագայից դժուարութեան և երկրին ծանր վիճակին հակառակ՝ ժողովս վեհ. Սոյլմանին պատգամադրին մէջ նշանակեալ օրինաց և կանոնադրութեանց մէկ մասը քննեց ու որոշեց : Երեսնէն իւր ներքին կանոնադրութիւնը, թաղայեթներու օրէնքը, տաղաւրական օրէնքը, ընտրական օրէնքը, պաշարման վիճակի օրէնքը, Երեսնէ-տից հաշուեցոյցը, թղթադրամաց վերաբերեալ կանոնադրութիւնը : Ուրիշ օրէնքներ ու կանոնադրութիւններ ալ կան, բայց ժամանակ չըլլաւ համար չլրջն ներկայի մեզ : Բայց արդէն կատարածնիս ալ փոքր գործ չէ և երկրին համար օգտակար

և կարևոր ծառայութիւն մ'է : Ամենէն աւելի ժողովիս պատիւ բերող բանն է իւր զբօն խոհական և հանդարտ ընթացքը, որ մինչև իսկ օտարազգեաց գովութեանն արժանացաւ : Ժողովիս անդամաց ցոյց տուած բնական ձիրքերը, պաշտպանած յառաջդիմական գաղափարներն, և այս առաջին շրջանին մէջ ցոյց տուած արժանապատուութիւնը կը ներեն մեզ յոսալ որ յառաջիկային մէջ ընտրութիւնը անդամներն ալ ոչք և ըլլան՝ նշանաւոր ծառայութիւններ պիտի մատուցանեն երկրին :

«Սաղթիւնք ուրեմն որ բարձրեալն Աստուած երկար կեանք պարգևէ մեր արդարաւոր և ազատամիտ վեհապետին, որ մեր Սահմանադրութեան հիմնադիրն է, փառաւոր յաղթութիւններ չնորհէ իրեն, և երկրիս ալ խաղաղութիւն պարգևէ : »

Ժողովականք միաձայն «Ֆէ գոչեցին, և ատենը գոյուեցաւ :

Վեհ. Սոյլմանն երէկ միջօրէի աղօթքէն ետեւ թօփահեղի քէօշին երթալով, ուր Մեծ-Եպարքոսն և այլ նախարարք ներկայ էին, երկու դուռը չէր քէօշ հիմերոց և երեք վաշտ Զէյպէք կամաւորաց զօրահանգէս ըրաւ :

Յետոյ նախարարք ի խորհուրդ գումարեցան ընդ նախագահութեամբ վեհ. Սոյլմանին :

Մայրաքաղաքիս Գերմանական դեսպան Բաշեն տը Ռէօս չորեքշաբթի իրիկուն դեսպանական ճաշ մը տուաւ, Մեծ-Եպարքոսին արտաքին և ծովային գործոց նախարարներուն և այլ քանի մը բարձրաստիճան պաշտօնատարաց :

Անգլիայ դեսպան Պ. Լէյքը տը երէկ իրիկուն ճաշ տուաւ Բ. Դրան նախարարաց :

Մեծ-Եպարքոսը վեց ձի նուիրեց կայսերական բանակին : Որքին Ղալիպ պէյ ալ երկու կառածիք երկվար նուիրեց :

Զէյպէք կամաւորաց մէկ մասն այսօր մեկնեցան մայրաքաղաքէս պատերազմի դաշտն երթալու համար :

Ասոնցմէ մին, կըսէ Գուրիէ, անցեալ օր Ղալիպի ճաշարան մը մըտնելով լաւ մ'ուտել խմելէն ետքը, առանց ստակը վճարելու կը մեկնի : ճաշարանին սպասաւորն ստակն ուղեւուն վրայ պնդելով, Զէյպէքը կը քաշէ ետժաղանը և ազան զարնելով կը փախի դէպ ի Գումապարաճի փողոցէն վեր : իսկոյն քանի մը ոտիկան ու 20ի չափ անձինք ետեւէն կիլնան Զէյպէքին, որ սուր ի ձեռքն՝ մատեցող զարնել կ'սպառնար, սուկայն վերջապէս կը բռնուի :

Ուրիշ Զէյպէք մ'ալ, կըսէ Սթամպոլ, նախորդ առաւօտուն արեւալ վիճակի մէջ Բերայի մեծ փողոցէն անցած միջոցին, հանդարտ և անփնտռ իրենց ճանքան գնացող երկու հայազգիներ իւր ետթաղանովը կը զարնէ : իսկոյն ոտիկանութեան զինուորներ վրայ հասնելով Զէյպէքը բռնել կուզեն, իսկ նա իւր ետթաղանովը շրջան մ'ընելով, իւր վրայ յարձակողները չմտաեցներ, և ոտիկանաց հարկերապետն ալ կը վերաւորէ : Պահ մ'այսպէս անցնելէն վերջը անցորդք հեռագհետէ խռնելով, մեծ մասամբ Յոյները կ'սկսին միջամտել և խոշոր քարեր նետելով վրան վերջապէս կը տապալեն զայն, և իսկոյն վրայ հասնելով կը բռնեն ու լաւ մը կ'ապերով բանար կը տա :

նին : կըսուի թէ վիրտորեալ հայերէն մին մեռեր է :

Սթամպոլ լրագրին մէջ կը կարդանք թէ անցեալ օր Զէյպէք մը Ղալիպի թրամվայի ճանքուն վրայ կ'օղակարի մը խանութը մտնելով, կոշիկ (պօթ) մը կուզէ, և զոյգ մը բան հաւնելով հաղիւ սաքը անցուցած էր, խանութին դրանն աւելեւ հեծեալ Զէյպէքի մը անցնիլը տեսնելով, «Երթա՛մ ընկերոջս ցոյց տա՛մ կոշիկս ու գամ վճարե՛մ դիմը» կըսէ ու դուրս կ'ելլէ հաղիւ թէ ձիուն մետ կը հասնի, ձիուն վրայ ցաթիկն ու նստողին մէջքէն բռնելով ձիարձակ հեռանալին մէկ կըլլայ :

Պապին Եպիսկոպոսութեան յորձեւան (30 տարուան) տարեգարձին առթիւ՝ մայրաքաղաքիս (հասունիսթ) Հռովմէական հայոց կողմանէ, Հասուն դերասաններն և կոմիկներն կողմանէ խնդակցութեան Ուղերձով մը հանդերձ, մեզայիքներով և գոհարներով զարդարուած սակի ընչատու մը ընծայ զրկուեր է Պապին, ոսկեթիւ հիւսուած քսակի մը մէջ, որոյ վրայ ալ գրուած է եղեր — «Յիշատակ կաթողիկ հայոց առ Ս. Պիոս թ. Պապ» : Այս ոսկեթիւ քսակն՝ Հասուններն 30 տարին ի վեր հաստատած Անարատ յղութեան մայրապետաց Ուխտին ձեռակերտն եղեր :

Մէծմուսլը Հափափա լրագիրն որ մինչև ցարդ թուրքերէն լեզուաւ կը հրատարակուէր, յառաջիկայ երկուշաբթի օրէն սկսեալ հայերէն լեզուաւ պիտի հրատարակի խմբագրութեամբ Մեծ. Յ. Հովսեփեանց Էֆէնտիին : Գինն է թղթագրամի ողջ հաշուով տարեկան 200 զրշ, վեցամսեայ 140, եռամսեայ 60, միամսեայ 20 օրուան թիւը 40 փարա :

Յ. Հովսեփեանց Էֆէնտիին յաջողակ գրինն ու հիմնութիւնն իւր յայտարարած ողջամիտ սկզբանց և առաջադրութեանց հետ միացեալ յուսատու երաշխաւորութիւն մ'են իւր ձեռնարկութեան արդիւնաւորութեանն ու օգտակարութեանն. ուստի մեք ալ անկեղծաբար յաջողութիւն կը մաղթենք իրեն :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ			
ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ			
17 յունիս. երրորդ իրիկուն			9,31
18 յունիս. չորրորդ առաւօտ			
բացուեցաւ			9,30
ժամ 6 ին			9,31
Բուսկի երկաթուղի	Փր.	24 50	
Թղթագրամ	Ժր.	179 20	
ԸՆԹԱՅՐ ԱՐԺԵԹՂԹՈՑ			
Կ. Պոլս 17 Յունիս			
Ստիւթէ Ժէնըրալ Բաթ. Անգլ. լր.		2,35	
Փոխանակութեան		1,20	
Կ. Պոլսոյ Պանթալի		2,25	
Քրէտի Ժէնըրալ		2,	
Քրէտի Օսթրո-թուրք		—	
Փոխ. 1863	Ձր.	51	
" 1865		52	
" 1869		46	
" 1872		46	
" 1873		44	
Թրամուս	Օտմ. լր.	1 47	
ԸՆԹԱՅՐ ԴԻՍԿՈՑ			
17 Յունիս			
Անգլ. լր.	Արշ.	109 38	
Նարթոն սակի		57 32	
Խմբագր. Սոս		9 40	
Գըրմից		51 20	
Հինգ Ֆրանք		—	
Հինգնոց		114 20	
Պղինձ		178	

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Երէկ աղբային ժողովը Գումափափա Մայր եկեղեցին գումարեցաւ Ս. Պատրիարք հօր նախագահութեամբ :

Ժամ 7 1/2 ին ատենն բացուելով, նախընթաց երկրորդ նշանաւ ա-

տենագրութիւնն և Պաղտատէն ու իշմիրէն ընտրեալ երեսփոխանաց ընտրութիւնը վաւերանայէ ետեւ, Բաղ. ժողովոյ ընտրեալաց ցանկին վրայ առննապետաց համագումար գիւանին տեղեկագիրը կարգացուեցաւ :

Հրաժարեալ Բաղ. ժողովոյ անդամք իրենց անունները ցանկին մէջ գրուած տեւելով՝ կրկին հրաժարագիր մը տուած էին Ս. Պատրիարքին՝ և իրենց հրաժարականին անդառնալի ըլլալուն վրայ կը պնդէին :

Սուր վրայ բաւական վիճաբանուելէ ետեւ որոշուեցաւ ընտրեալաց ցանկն առննապետաց գիւանին դարձուել օրպէս զի 28 ընտրեալաց նոր ցանկ մը բերէ :

Ատենը ժամ 9 1/2 ին գոյուեցաւ, 15 օրէն գումարուելու պայմանաւ :

Սոյն միջոցին Ս. Պատրիարք հայրը Բաղէջէն ծանր իրողութիւններ ծանուցանող հեռագիր մ'ստանալով, անմիջապէս ելաւ Բարձր. Մեծ-Ե. պարքոսին գնաց :

Իշմիրէն և Պաղտատէն ընտրեալ երեսփոխաններն են՝

Մեծ. Պապի Էֆ. Պապոսեան.

Ս. Մելքոն և Իսկէնտէրեան.

Գումափափա Մայր եկեղեցւոյ Թաղ. խորհուրդը կը խնդրէ մեզնէ ծանուցանել թէ Ամեն. Խրիմեան սրբալիւն վաղը հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցանէ Մայր եկեղեցին :

Ս. Պատրիարք հայրն հաղար զըշ նուիրեց Օսմանեան կարմիր-Մահիկի ընկերութեան :

Թ. Ղ. Ս. Յ. ՈՒ Յ. ՈՒ Յ. Ի. Ն. ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ

... Խմբագրապետ Տէր.

Նախընթաց նամակաւ ըսի թէ Ազգ. ժողովոյ մէջ Ղալիպի խմբակին անդամները Վսեմ. Ստեփան փաշայի շնորհիւ երեսփոխանական ապօրէն ընտրութիւնները վաւերացնելով Սահմանադրութեան ոգւոյն և արամադրութեանց հակառակ վարուեցան, որով օրինազանցութիւնը քաջալերեցին :

Ներեցէք ինձ որ իմ այս ըսածիս աւագոյցը տամ :

Ազգ. ժողովոյ տարւոյս բացման Բ. նստին մէջ Վսեմ. Ստեփան փաշա այսպէս խօսած է. «Բաց ասկէ՝ միթէ չէ՞ր կըրնար Վարչութիւնն որ տարիէ մը ի վեր պաշտօն կը վարէ, ընտրողաց ցուցակներուն պատրաստութեան համար ամեն թաղ հրահանգ զրկել և գործադրել տալ ժամանակին, չգործադրողներն իբրեւ ըմբոստ պատժել կամ Ազգ. ժողովոյ առջեւ ամբաստանել. եթէ կանխաւ չկրցաւ ընել, գոնէ այս վերջին երկու ամսոց մէջ ալ չէր կրնար ընել. բայց չէ կրցեր ընել. ևս առաջինն եմ հաւատացողներէն՝ որ չէ կրցեր ընել, վասն զի չեն մարի ըրեր զիմքը ուստի քանի որ չէ յաջողեր, կամ Թաղ. խորհուրդը յանցաւոր են և կամ վարչութիւնն Ա. Յ. Ա. Ս. Ս. Ս. մեք ի՞նչ իրաւամբ ընտրեալ երեսփոխանները մերժենք. ասի պարզապէս մէկուն յանցանքին համար ուրիշ մը պատժել ըսել է, որ արդարու թեան հակառակ է : Ուստի կառավարկեմ որ բողոքողաց բարի նախանձը մէկ զի թողով ընտրութեանց վաւերացումը կատարենք» :

Հոս գիտողութեան արժանի քանի մը գլխաւոր կէտեր կան, զորս կուզենք ցոյց տալ վստիկ Ստեփան փաշային բուն նպատակն ի վեր կը հանեն, այն է՝ Քաղ. ժողովոյ աղբեցութիւնը բեկանելով զայն ի հրաժարում պարտաւորել և ի ձեռն օրինադանցութեան Ղալիպի խմբակին անդամաց թիւն տառապանքնել :

Ա. Հրաժարեալ Բաղ. ժողովն իւր սալա-տօնապարութեան միտման շրջանին մէջ ընտրողաց ցուցակները չկրնալ պատրաստուելու համար եթէ իբրեւ անկարող է,

NORTH BRITISH AND MERCANTILE INSURANCE COMPANY

ՆՈՐԹ ԲՐԻՏԻՇ ԵՆՏ ՄԵՐԿԱՆՏԻԼ ԻՆՍՈՒՐԱՆՍ ԿՈՄՓԵՆԻ
Լ-նորայն և Լ-արենգորթի ադահալ-բեան
Էնգլիս-բեան Անգլ. ԼԲ.

Բաժանորդ ադրեալ դրամադրութ 2,000,000
Վճարեալ դրամադրութ 230,000
Պահեստի դրամ հրդեհ
Հի ճիւղէն դոյացեալ 1,040,744—1,290,744
1875ին հրդեհին զուտ հասոյթ 917,178

Ստորագրեալք իրենց բազմաթիւ յաճախորդաց և այս քաղաքիս ընդհանուր հասարակութեան կը ծանուցանեն որ իրենք վերայիւ ալ երկու ընկերութեանց միացեալ գործակատար ընտրուած ըլլալով, այնպիսի դրութեան մը մէջ կը գտնուին, որով հրդեհին զէմ ապահովութեան մեծ զխրութիւններ կը մատուցանեն, Ապահովութեանց կարգադրութիւնները կը բաղկանան երկու ընկերութեանց մէջ համեմատական բաժանումէ մը, և յսպիս ապահովութեան և զխրութեան աւելնալովն ընկերութիւնս ալ կրնայ աւելի մեծագումար ապահովութիւն բռնուցնելու ինքզինք ներկայացունել:

Գրեթէ մանկ կարդի վտանգաւոր աղահալութիւնք կրնան ընդունուիլ ինչպէս Բերայի Ղալաթիոյ և Պոլսոյ մէջ, նոյնպէս մօտակայ քաղաքները զիւրերը և դասաւորները:

Գլխերուն և աւելի մանրամասն տեղեկութեանց համար պէտք է զիմե Միացեալ ընկերութեանցս գրասենեակը Ղալաթիոյ Բէրլէսմէ բաղարի մօտ լալալանի:

NORTHERN ASSURANCE COMPANY

ՆՈՐԹ ԶԵՐՆ
Լ-նորայն և Լ-արենգորթի ադահալ-բեան
Էնգլիս-բեան Անգլ. ԼԲ.

Բաժանորդ ադրեալ դրամադրութ 3,000,000
Վճարեալ դրամադրութ 150,000
Պահեստի դրամ հրդեհ
Հի ճիւղէն դոյացեալ 380,000—530,000
Զուտ հասոյթ 1875ին 351,000